# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

20.04.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ**

**թիվ ՍՑ-ԱՄ-2018/42**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.04.2018թ. թիվ 03/26-3/6372-18 գրությամբ «Գեմար» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 04.04.2018թ. թիվ ՎՀ/2006-18 գրության հիման վրա, 07.04.2018թ. թիվ 03/26-3/6372-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Գեմար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերությունը) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Գեմար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Գեմար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.04.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի Ընկերությունը հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընկերությունը նշել է նաև, որ այդ հարկային պարտավորությունները մարվել են հաջորդ օրը և առկա է հիմնավորող փաստաթուղթ, որը ներկայացվել է ՀՀ գնումներ հետ կապված բողոքներ քննող անձին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/42 ընթացակարգի շրջանակներում 13.04.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 04.04.2018թ. թիվ ՎՀ/2006-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից

կազմակերպված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Գեմար» ՍՊԸ-ն ունի հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/42 ընթացակարգի շրջանակներում 13.04.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. ՍՑ-ԱՄ-2018/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՍՑ-ԱՄ-2018/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 24.03.2018թ. հայտ է ներկայացրել «Գեմար» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գեմար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 72 856 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 03.04.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գեմար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.04.2018թ. թիվ 03/26-3/6372-18 գրությունը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 04.04.2018թ. թիվ ՎՀ/2006-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով ***24.03.2018թ.*** հայտ է ներկայացրել «Գեմար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2018թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գեմար» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 26.03.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Գեմար» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 29.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գեմար»***

***ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 72 856 ՀՀ դրամի չափով:***

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Գեմար» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 72 856 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ

տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորություն-ների առկայությունը, ***ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից ներկայացված այն փաստարկին, որ Ընկերությունը 27.03.2018թ. մարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունները, արձանագրում եմ, որ այն չի կարող դիտարկվել որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ, քանի որ Ընկերությունը «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացրել է 24.03.2018թ.:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, գտնում եմ, որ «Գեմար» ՍՊ ընկերությունը «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.04.2018թ. թիվ 03/26-3/6372-18 գրությամբ «Գեմար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06108766) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գեմար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**